

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐՁԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12 մայիսի 2011թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ Ս. Միքայելյանը:

Օրակարգում՝

1. Մարզում հանրակրթության վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման ընթացքի և ոլորտում առկա խնդիրների մասին:
/Ձեկ. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ. Հարությունյան/
2. ՀՀ Սյունիքի մարզում Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին :
/Ձեկ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ Վ. Գրիգորյան/
3. ՀՀ Սյունիքի մարզում 2011 թվականի զարնանային զորակոչի անցկացման աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին:
/ Ձեկ. Գորիսի տարածքային զինվորական կոմիսար (ավագ զինկոմ) Մ. Պողոսյան/
4. Տեղեկատվություն մարզային ենթակայության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրական ակտերի պահանջների կատարման վիճակի և առկա խնդիրների մասին:
/Ձեկ. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանով/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Մարզում հանրակրթության վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման ընթացքի և ոլորտում առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լյուդվիգ Հարությունյանը:

Օրակարգի երկրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզում Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ազգային

վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ Վլադիմիր Գրիգորյանը:

Օրակարգի երրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզում 2011 թվականի գարնանային զորակոչի անցկացման աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ Գորիսի տարածքային զինվորական կոմիսար (ավագ զինկոմ) Մելիքսեթ Պողոսյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Տեղեկատվություն մարզային ենթակայության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրական ակտերի պահանջների կատարման վիճակի և առկա խնդիրների մասին» տեղեկատվությամբ հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը:

/Կցվում են զեկուցումները/:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը:

Հարցադրումներով հանդես եկան Մեղրիի զինվորական կոմիսար Դավիթ Անանյանը, Հարթաշենի համայնքի ղեկավար Ազատ Ղուկասյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան